

ԷՍՏՈՆԻԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐ ՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱԼԼԻՆՈՒՄ

1987 թվականի նոյեմբերի 15-ին և 16-ին Էստոնիայի մայրաքաղաք Տալլինում տեղի ունեցան Էստոնիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու նոր պետի՝ Կունո Պայուլա արքեպիսկոպոսի գահակալության հանդիսությունները:

Մայրաքաղաքի Դոմի մեծ տաճարում ձեռնադրության և հանդիսավոր ս. պատարագին ներկա էին Լենինգրադի և Էստոնիայի միտրոպոլիտ Տ. Ալեքսին (Ռուս Ուղղափառ Եկեղեցի), Լատվիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու պետ Էրիկ Մեստերս արքեպիսկոպոսը, հանուն Լիտվայի Կաթոլիկ Եկեղեցու՝ Լիտուրգիկ հանձնաժողովի նախագահ Վ. Ալյուլիսը: Ներկա էին նաև Ավստրիայի, ԳԴՀ-ի, ԴՖՀ-ի, Դանիայի, Հունգարիայի, Նորվեգիայի, Շվեդիայի, Չեխոսլովակիայի և Ֆինլանդիայի տարբեր Եկեղեցիների ներկայացուցիչներ:

Ի դեմս Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Տ. Կունո Պայուլայի գահակալության հանդիսություններին մասնակցեց Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը:

Հանդիսավոր ս. պատարագն ու ձեռնադրությունը կատարեց Ֆինլանդիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու պետը: Բարձրաստիճան հյուրերը հանդես եկան շնորհավորանքներով և ողջույնի խոսքերով: Հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսք առավ Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը: Սրբազան հայրը անդրադարձավ հայ-էստոնական պատմական, բարեկամական կապերին, մանավանդ խորհրդայնացումից հետո խորացող եղբայրական հարաբերու-



թյուններին, ի մասնավորի քույր Եկեղեցիների համագործակցությանը՝ էկումենիկ շարժման և համաշխարհային խաղաղության համար մղվող պայքարում: Հույս

հայտնեց, որ հետ այսու ևս քույր Եկեղեցիները ջանք չեն խնայի արդյունավետ համագործակցության և համաքրիստոնեական եղբայրության համար:

Նույն օրը, երեկոյան, ի պատիվ հյուրերի, տրվեց ճոխ ճաշկերույթ:

Հանդիսությունները շարունակվեցին նաև հաջորդ օրը: Նոյեմբերի 16-ի առավոտյան արտասահմանցի հյուրերն ու քույր Եկեղեցիների ներկայացուցիչները ընդունվեցին Էստոնական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի քարտուղար տիար Վ. Ա. Վաինցի կողմից: Ապա հյուրերը ծաղկեպսակ զետեղեցին Էստոնիայի մայրաքաղաքի կենտրոնում գտնվող անհայտ զինվորի գերեզմանին:

Նույն օրը, երեկոյան, հրաժեշտի ընթրիքին բեղմնավոր գործունեության մաղթանքներով հանդես եկավ Ներսես սրբազանը:

1987 թ. հունիսի 29-ին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը հետևյալ հեռագրով շնորհավորել էր Կունո Պայուլա արքեպիսկոպոսի ընտրությունը.

ԳԵՐԱՇՆՈՐՀ ԿՈՒՆՈ ՊԱՅՈՒԼԱ
ԷՍՏՈՆԻԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-
ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Տալլին

Զերդ Սրբազնություն,

Գոհունակությամբ տեղեկացանք Զեր ընտրության մասին՝ որպես աթոռակալ Էստոնիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու:

Ս. Էջմիածնից հղում ենք Մեր ողջույնը և բարեմաղթությունը, որ ունենաք առողջության և ամուր ուժերի երկար տարիներ՝ հաջողությամբ իրականացնելու համար Զեր աստվածահաճո առաքելությունը ուղղված ձեր Սուրբ Եկեղեցու հետագա բարգավաճման:

Թող Հովվապետ Տերը օրհնի Զեր հետագա գործունեությունը:

Սիրով ի Քրիստոս

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

29 հունիս, 1987